«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Ռուս-Հայկական համալսարանի
Ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր
_____Է.Մ. Սանդոյան

«22» մայիսի 2026 թ.

ԿԱՐԾԻՔ

Սարգիս Խաչատուրի Թևոսյանի «Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի բարելավման հիմնական ուղիները (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Ռուս-Հայկական համալսարանի «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնի 2026 թվականի մայիսի 22-ի նիստում (արձանագրություն թիվ 5):

Մասնակցում էին՝
Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Ախինով Գրիգոր Արտուշի**՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ, **Չախոյան Էլիզա Միքայելի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Կարապետյան Էդգար Գագիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Պետրոսյան Իրինա Բորիսի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնի վարիչ, **Տիգրանյան Վարսիկ Իշխանի,** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Մնացականյան Լիդա Արմենի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Հակոբյան Էսթեր Աշոտի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Հակոբյան Արմինե Արզումանի**՝ ավագ դասախոս, **Պետրոսյան Գարիկ Արմենակի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Պետրոսյան Հեղինե Գագիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Սարգսյան Լիլիթ Կարենի՝** ավագ դասախոս, **Պապյան Զինավարդ Կարենի**՝ դասախոս, **Շմավոնյան Էլեն Հակոբի**՝ ասիստենտ, **Կարապետյան Նաիրա Արմենի**՝ ասպիրանտ, **Բալայան Աշոտ Արսենի**՝ ավագ դասախոս, հայցորդ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է հանրային ֆինանսների կառավարման համակարգի նկատմամբ ժամանակակից տնտեսության առաջադրած նոր պահանջներով և պետական կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ: Գլոբալ տնտեսական գործընթացների խորացումը, ֆինանսական հոսքերի աճող բարդությունը, պետական ծրագրերի բազմազանության ընդլայնումը և հասարակության կողմից հանրային ծառայությունների որակի նկատմամբ բարձր ակնկալիքները պահանջում են կառավարման նոր և առավել ճկուն մոտեցումների կիրառություն: Այս պայմաններում պետության առջև դրված կարևորագույն խնդիրներից է ֆինանսական ռեսուրսների նպատակային, արդյունավետ և թափանցիկ օգտագործման ապահովումը:

Հանրային ֆինանսների կառավարումը հանդիսանում է պետական քաղաքականության իրականացման առանցքային գործիքներից մեկը, քանի որ դրա միջոցով ձևավորվում և բաշխվում են այն ռեսուրսները, որոնք ուղղվում են հասարակական նշանակության խնդիրների լուծմանը՝ սոցիալական պաշտպանության, կրթության, առողջապահության, ենթակառուցվածքների զարգացման և այլ կարևոր ոլորտների ֆինանսավորմանը: Միաժամանակ ֆինանսական ռեսուրսների ծավալների մեծացումը ինքնին դեռևս բավարար նախապայման չէ արդյունավետ կառավարման համար, եթե բացակայում են դրանց օգտագործման նկատմամբ հստակ վերահսկողական մեխանիզմները:

Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողությունը արդի պայմաններում ձեռք է բերում ոչ միայն հաշվետվողականության և իրավաչափության ապահովման, այլ նաև ռազմավարական նշանակություն: Այն հնարավորություն է տալիս բացահայտելու ռեսուրսների օգտագործման ընթացքում առաջացող շեղումները, գնահատելու իրականացվող ծրագրերի արդյունավետությունը, նվազեցնելու ֆինանսական ռիսկերը և բարձրացնելու պետական կառավարման որակը: Առանձնահատուկ կարևորություն է ստանում վերահսկողական գործընթացների կատարելագործումը հատկապես ծրագրային բյուջետավորման, արդյունքահեն կառավարման և պետական մասնակցությամբ կազմակերպությունների գործունեության պայմաններում:

Հայաստանի Հանրապետությունում հանրային ֆինանսների կառավարման համակարգի շարունակական բարեփոխումները, պետական կառավարման արդիականացման գործընթացները, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխան վերահսկողական գործիքակազմի ներդրման անհրաժեշտությունը լրացուցիչ կարևորություն են հաղորդում տվյալ թեմային: Նշված հանգամանքները պայմանավորում են հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի կատարելագործման վերաբերյալ գիտական ուսումնասիրությունների և գործնական առաջարկությունների մշակման արդիականությունն ու հրատապությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակն է մշակել և ներկայացնել ՀՀ հանրային ֆինանսների կառավարման ոլորտում գործող վերահսկողության համակարգի կատարելագործման ուղիներ:

Հետազոտության շրջանակներում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել հանրային ֆինանսների տեսական հիմքերը և կառավարման գործընթացը, վերլուծել այդ ուղղությամբ առկա միջազգային ընկալումները և փորձը,
- վերլուծել բյուջետային գործընթացի իրականացման օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ հիմքերը ՀՀ-ում,
- բացահայտել ՀՀ հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի հիմնախնդիրները,
- մշակել բյուջետային ծրագրերի և միջոցառումների դասակարգման նոր մոտեցումներ և կառուցակարգեր՝ դրանց իրականացման գործընթացի նկատմամբ վերահսկողության համակարգի բարելավման նպատակով,
- առաջարկել բյուջետային միջոցառումների արդյունքային ցուցանիշների մշակման նոր եղանակներ և մոտեցումներ՝ դրանց նկատմամբ արդյունավետության վերահսկողության իրականացման նպատակով,
- ներկայացնել պլանավորման փուլում վերահսկողության իրականացման հիմնական ուղղությունները,
- հանրային ֆինանսների կառավարման համատեքստում դիտարկել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների դերը, բացահայտել դրանց նկատմամբ վերահսկողության գործընթացի հիմնախնդիրները,
- մշակել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում հանրային ֆինանսների ներգրավման և կառավարման գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացման հիմնական ուղղությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթները ըստ հեղինակի հանգում են հետևյալին.

1. Մշակվել է բյուջետային ծրագրերի և միջոցառումների նոր դասակարգում, ինչը հնարավորություն կտա ապահովել այդ ծրագրերի ֆինանսական գնահատականի և դրանց հաշվարկների հիմքում դրված բաղադրիչների միջև կապը,

2. Մշակվել են բյուջետային ծրագրերի և միջոցառումների համար արդյունքային ցուցանիշների սահմանման և գնահատման նոր մոտեցումներ, ինչը կնպաստի ինչպես ծրագրերի կանոնավոր գնահատմանը, այնպես էլ դրանց արդյունավետության նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացմանը,
3. Վերահսկողությունը դիտարկելով որպես կառավարման յուրաքանչյուր գործառույթի նկատմամբ իրականացվող գործընթաց՝ ներկայացվել է բյուջետային միջոցառումների պլանավորման փուլում վերահսկողության իրականացման մոտեցում՝ միջոցառումների յուրաքանչյուր խմբի համար վերահսկողության իրականացման ուղղությունների մշակմամբ,
4. Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների դերը դիտարկվել է հանրային ֆինանսների կառավարման համատեքստում մշակելով դրանց կողմից հանրային ֆինանսների ներգրավման և կառավարման գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացման հիմնական ուղղությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հանրային ֆինանսների կառավարման գործընթացի և վերահսկողության համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ հանրապետությունում տնտեսության զարգացման, գործարար միջավայրի բարելավման և բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների համալիրի մշակման և դրա հետևողական իրականացման ընթացքում: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև նշված համակարգերում աշխատողների համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատության ընդհանուր ծավալը կազմում է 134 էջ՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը և կիրառման հնարավորությունները:

Ատենախոսության առաջին՝ **«Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի տեսամեթոդաբանական հիմնահարցերը»** գլխում, ուսումնասիրվել են հանրային ֆինանսների կառավարման ոլորտի տեսական հիմքերը, դրա ձևավորման պատմական զարգացման փուլերը և վերահսկողության համակարգի գիտամեթոդական առանձնահատկությունները: Մասնավորապես ներկայացվել են հանրային ֆինանսների բովանդակային և կառուցվածքային առանձնահատկությունները, քննարկվել են տարբեր տնտեսական դպրոցների և գիտնականների մոտեցումները հանրային ֆինանսների էության, դրանց կառավարման և զարգացման օրինաչափությունների վերաբերյալ: Վերլուծության են ենթարկվել հանրային ֆինանսների առաջացման նախադրյալները, դրանց պատմական զարգացումը և պետության դերի փոփոխությունները տնտեսական հարաբերությունների զարգացման տարբեր փուլերում:

Գլխում հատուկ ուշադրություն է դարձվել հանրային ֆինանսների կառավարման գործընթացի էության բացահայտմանը, ներկայացվել են դրա հիմնական նպատակները, սկզբունքները և գործառույթները: Քննարկվել են հանրային ֆինանսների կառավարման շրջանակներում պետական կառավարման համակարգի դերակատարությունը, ֆինանսական ռեսուրսների ձևավորման և օգտագործման առանձնահատկությունները, ինչպես նաև հանրային ֆինանսների ազդեցությունը տնտեսական և սոցիալական գործընթացների վրա: Ներկայացվել են հանրային ֆինանսների կառավարման գործընթացի հիմնական բաղադրիչները և դրանց միջև առկա փոխկապակցվածությունը: Առաջին գլխի կարևոր բաղադրիչ է հանդիսացել նաև վերահսկողության համակարգի ուսումնասիրությունը՝ որպես կառավարման գործընթացի անբաժանելի տարր: Բացահայտվել են վերահսկողության նշանակությունը, դրա տնտեսական բովանդակությունը և կառավարման համակարգում ունեցած դերը: Քննարկվել են վերահսկողության տարբեր տեսակները, դրանց գործառույթները, իրականացման մեխանիզմները և միջազգային փորձը: Հատուկ անդրադարձ է կատարվել հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության առանձնահատկություններին՝ պայմանավորված հանրային շահի գերակայությամբ և պետական միջոցների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությամբ:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի հիմնախնդիրները ՀՀ-ում»** գլխում, իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում գործող հանրային ֆինանսների կառավարման և վերահսկողության համակարգի վերլուծություն, բացահայտվել են դրա հիմնական խնդիրներն ու սահմանափակումները:

Նախ ուսումնասիրվել են բյուջետային միջոցառումների համար արդյունքային չափորոշիչների սահմանման գործընթացի առանձնահատկությունները և առկա դժվարությունները: Վերլուծվել են ծրագրային բյուջետավորման համակարգում կիրառվող մոտեցումները, գնահատվել են ծրագրերի արդյունավետության չափման մեխանիզմները,

ինչպես նաև բացահայտվել են ցուցանիշների սահմանման գործընթացում առկա անհամապատասխանություններն ու մեթոդաբանական խնդիրները:

Այնուհետև ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետությունում գործող վերահսկողական համակարգը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով պլանավորման փուլում վերահսկողության կազմակերպմանը: Քննարկվել են ռազմավարական փաստաթղթերի, միջնաժամկետ ծախսային ծրագրերի և պետական բյուջեի միջև փոխկապակցվածության խնդիրները: Վերլուծության արդյունքում բացահայտվել են այն հիմնական խոչընդոտները, որոնք սահմանափակում են արդյունավետ վերահսկողության իրականացումը դեռևս ծրագրավորման և պլանավորման փուլերում: Գլխի շրջանակներում ուսումնասիրվել են նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում հանրային ֆինանսների կառավարման և վերահսկողության հիմնախնդիրները: Քննարկվել են նման կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունները, պետական ֆինանսական մասնակցության արդյունավետության գնահատման խնդիրները, ինչպես նաև դրանց նկատմամբ վերահսկողության գործող մեխանիզմների սահմանափակումները:

Ատենախոսության երրորդ՝ **«Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի կատարելագործման ուղիները»** գլխում, ներկայացվել են ուսումնասիրության արդյունքում մշակված հիմնական առաջարկությունները և վերահսկողական համակարգի բարելավման ուղղությունները: Առաջին հերթին առաջարկվել են բյուջետային ծրագրերի և միջոցառումների դասակարգման մոտեցումներ, որոնք հնարավորություն են տալիս առավել հստակ կապ ապահովել ծրագրերի նպատակների, ֆինանսական ռեսուրսների և ակնկալվող արդյունքների միջև: Ներկայացվել են նաև արդյունքային ցուցանիշների մշակման սկզբունքներ: Այնուհետև մշակվել են պլանավորման փուլում վերահսկողության իրականացման հիմնական ուղղությունները՝ դիտարկելով վերահսկողությունը ոչ միայն որպես ավարտված գործընթացների գնահատման միջոց, այլ նաև որպես կառավարման բոլոր փուլերին ուղեկցող գործիք: Գլխի վերջին հատվածում ներկայացվել են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում հանրային ֆինանսների կառավարման և վերահսկողության բարելավման հիմնական ուղղությունները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Գիտական նորույթների ձևակերպումները հիմնականում գործնական/կիրառական առաջարկների բնույթ ունեն և բավարար չափով չեն առանձնացվում որպես գիտական նորույթ:** Նորույթները ներկայացվում են որպես բյուջետային ծրագրերի նոր դասակարգում, արդյունքային ցուցանիշների մոտեցումներ, պլանավորման փուլում վերահսկողության մոտեցում և ՊՄՁ-ների վերահսկողության ուղղություններ: Սակայն

հստակ չի ցույց տրվում՝ արդյո՞ք դրանք նոր տեսական մոդել են, մեթոդաբանություն, չափման նոր գործիք, թե պարզապես կառավարման բարելավման առաջարկներ: Բացի այդ, նորույթների համար բացակայում է միջազգային մոտեցումների հետ համեմատական հստակ սահմանազատումը՝ ինչը կա արդեն Պետական ֆինանսների կառավարման (PFM), ծրագրային բյուջետավորման, կամ կատարողականի աուդիտի վերաբերյալ գրականությունում և ինչն է հեղինակի ինքնուրույն ներդրումը:

2. **Առաջին գիտական նորույթի շրջանակում առաջարկվող բյուջետային ծրագրերի և միջոցառումների՝ «ֆիքսված ծախսեր» և «ռազմավարական ծրագրեր» դասակարգումը հետաքրքիր է, սակայն դրա մեթոդաբանական հիմնավորումը ամբողջական չէ:** Հեղինակը բավարար չափով չի վերլուծել առաջարկվող դասակարգման հարաբերակցությունը ՀՀ բյուջետային համակարգում արդեն իսկ կիրառվող տնտեսագիտական, գործառնական և ծրագրային դասակարգումների հետ, ինչի արդյունքում պարզ չէ՝ այն փոխարինո՞ւմ է գործող դասակարգումներին, լրացնո՞ւմ է դրանք, թե՞ նախատեսված է որպես լրացուցիչ վերլուծական/վերահսկողական գործիք: Այսպիսի համադրության բացակայությունը նվազեցնում է առաջարկվող դասակարգման մեթոդաբանական հստակությունը և գործնական կիրառելիությունը: Բացի այդ, գործնականում բազմաթիվ բյուջետային միջոցառումներ կարող են ունենալ խառը բնույթ՝ միաժամանակ ներառելով վարչական պահպանում, ծառայությունների մատուցում, կապիտալ ներդրումներ և քաղաքականության ազդեցություն, ինչի վերաբերյալ աշխատանքում չի նշվում:
3. **Երկրորդ գիտական նորույթը բավարար չափով ինքնուրույն չէ և բովանդակային առումով անմիջականորեն կապված է առաջին գիտական նորույթի հետ:** Հեղինակի կողմից առաջարկվող արդյունքային ցուցանիշների տարբերակված մոտեցումը կառուցված է բյուջետային ծրագրերի և միջոցառումների՝ իր իսկ առաջարկած դասակարգման վրա: Ընդ որում, առաջին նորույթում առաջարկվող դասակարգումն էլ, ըստ էության, ձևավորվել է հենց արդյունքային ցուցանիշների տարբերակված մոտեցումը կառուցելու նպատակով, ինչի պատճառով առաջին և երկրորդ նորույթների միջև սահմանազատումը հստակ չէ: Թեև մոտեցումը ընդհանուր առմամբ արդիական է և ուղղված է բյուջետային միջոցառումների ֆինանսական գնահատականի և արդյունքային չափորոշիչների միջև կապի ամրապնդմանը, նպատակահարմար կլիներ դրանք ներկայացնել մեկ միասնական գիտական նորույթի շրջանակում՝ որպես բյուջետային ծրագրերի դասակարգման և այդ դասակարգմանը համապատասխան արդյունքային ցուցանիշների սահմանման մեթոդական մոտեցում:
4. **Հետազոտության մեթոդները ներկայացված է անվանապես, բայց դրանց կիրառումը աշխատանքում միանշանակ չէ:** Ներածությունում նշվում են տնտեսավիճակագրական, համեմատական, համակարգային, գործոնային,

ֆինանսատնտեսական և փորձագիտական վերլուծության մեթոդներ, սակայն հետագա տեքստում հստակ չի երևում, թե դրանցից յուրաքանչյուրը որտեղ, ինչ տվյալների վրա և ինչ ընթացակարգով է կիրառվել: Օրինակ՝ «գործոնային վերլուծություն» նշվում է, բայց առկա չէ գործոնների համակարգված մոդելավորում, քանակական գնահատում, փոփոխականների ընտրություն կամ ստուգման մեթոդ: Սա մեթոդաբանական հիմնավորվածության տեսանկյունից թուլություն է:

5. **Բյուջետային գործընթացի վերաբերյալ ընդհանրացումները հիմնականում հիմնվում են սահմանափակ դեպքերի վերլուծության վրա**: Աշխատանքում պլանավորման փուլում վերահսկողության անհրաժեշտությունը հիմնավորվում է հիմնականում երկու խոշոր միջոցառումների օրինակով՝ «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» և «Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում»: Այդ դեպքերը կարևոր են, բայց բավարար չեն ամբողջ ՀՀ բյուջետային գործընթացի վերաբերյալ լայն եզրահանգումներ անելու համար: Պետք էր ներկայացնել դեպքերի ընտրության չափանիշները, դրանց ներկայացուցչականությունը, ինչպես նաև առնվազն մի քանի ոլորտային խմբերի համեմատական վերլուծություն:
6. **Էջ 98–99-ում աշխատանքի և ծախսերի արդյունավետության վերաբերյալ առաջարկվող ցուցանիշները կրում են մեխանիկական բնույթ և բավարար չափով չեն արտացոլում աշխատանքի բովանդակային կողմը**: Օրինակ՝ «Ծախսերի արդյունավետության ցուցանիշը» հաշվարկվում է հաստիքների քանակը վարձատրության գծով ծախսերի վրա բաժանելու միջոցով, և ցուցանիշի ցածր արժեքը, որը կարող է պայմանավորված լինել մեկ հաստիքին բաժին ընկնող ավելի բարձր վարձատրությամբ, դիտարկվում է որպես անարդյունավետության ռիսկ: Սակայն նման մոտեցումը հաշվի չի առնում պաշտոնների մասնագիտական բնույթը, աշխատանքի բարդությունը, պատասխանատվության մակարդակը, պահանջվող որակավորումը և փաստացի արդյունքը: Հետևաբար, ցուցանիշը կարող է մեխանիկորեն անարդյունավետ համարել այնպիսի ծախսեր, որոնք իրականում պայմանավորված են բարձր մասնագիտական կարողություններով կամ աշխատանքի առանձնահատուկ բարդությամբ: Այս առումով առաջարկվող ցուցանիշները կարող են կիրառվել միայն որպես նախնական ազդակային ցուցիչներ, ոչ թե որպես աշխատանքի վարձատրության ծախսերի արդյունավետության ամբողջական գնահատման մեթոդ:
7. **Մակրոտնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության կապը կարող էր ավելի խորքային լինել**: Աշխատանքը մի քանի տեղում նշում է, որ հանրային ֆինանսները ազդում են տնտեսության վրա, իսկ ՊՄՁ ծախսերը կարող են կապ ունենալ պետական պարտքի հետ, սակայն հետազոտության հիմնական առաջարկները բավարար չափով չեն կապվում հարկաբյուջետային կայունության, պարտքի

կառավարման, ՄԺԾԾ-ի ծախսային առաստաղների, ֆիսկալ կանոնների, կապիտալ/ընթացիկ ծախսերի որակի և մակրոտնտեսական ռիսկերի հետ: Այս տեսանկյունից պլանավորման փուլում վերահսկողությունը պետք է դիտարկվեր ոչ միայն ծրագրի մակարդակով, այլև միջնաժամկետ ֆիսկալ շրջանակի, ծախսային առաջնահերթությունների և պարտքի կայունության համատեքստում:

8. **Ատենախոսությունում բացակայում են որևէ գծապատկերներ**: Գծապատկերներն տնտեսագիտության ոլորտում աշխատանքն ու վերլուծությունը դարձնում եմ ավելի պատկերավոր և արդիական, առավել ևս տվյալ թեմայի վերաբերյալ: Նշենք նաև, որ աշխատության մի շարք աղյուսակներում ներկայացված տվյալները հնարավոր էր ներկայացնել գծապատկերների տեսքով, օրինակ՝ աղյուսակ 2, այն է՝ 2021-2025 թթ. բյուջեի եկամուտները, ծախսերը և դեֆիցիտը; կամ աղյուսակը 4:
9. **Օգտագործված գրականության ցանկում ներկայացված են բազմաթիվ հին վերլուծություններ և գրքեր,** մինչդեռ նշված թեմայով առկա են բազմաթիվ նոր վելուծություններ և աշխատություններ, որոնք ներկայացնում են նորանոր լուծումներ և առաջարկություններ վերոնշյալ թեմայով: Աշխատանքի արդիականությունն ու օբյեկտիվությունն ապահովելու համար անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել նաև առաջատար հեղինակների կողմից իրականացված վերլությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սարգիս Խաչատուրի Թևոսյանի «Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի բարելավման հիմնական ուղիները (ՀՀ օրինակով)» թեմայով թեկնածական ատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **Սարգիս Խաչատուրի Թևոսյանի ««Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի բարելավման հիմնական ուղիները (ՀՀ օրինակով)»** թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝

ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝
Ռուս-Հայկական համալսարանի Ռեկտոր,
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի պրոֆեսոր,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ **Է. Մ. Սանդոյան**

Ռուս-Հայկական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Ի. Բ. Պետրոսյան**

Ռուս-Հայկական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ավագ դասախոս, տնտ. գիտ. թեկնածու՝ **Հ. Գ. Պետրոսյան**

Ռուս-Հայկական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ավագ դասախոս, տնտ. գիտ. թեկնածու՝ **Գ.Ա. Պետրոսյան**

Ռուս-Հայկական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու՝ **Ռ. Ս. Կասաբաբովա**